ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 17-Ա

30 հոկտեմբեր 2019 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և 20-րդ հոդվածի 1-ին կետի 1 –ին ենթակետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու վեցերորդ նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիտավան համայնքի ղեկավարի 2019 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի հաղորդումը:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիտավան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին:

3. Դիտավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը հաստատելու մասին:

4. «Դիտավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն ստեղծելու և «Դիտավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության կանոնադրությունն հաստատելու , <<Դիտավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության տնօրեն նշանակելու և <<Դիտավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը հաստատելու մասին:

5. Համայնքների միավորման մասին:

Կողմ (3)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Յարալյան Վաղինակ		
Մանուչարյան Ֆելիքս		
Բայրամյան Միքայել		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

(Կ. Տ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 18-Ա

30 հոկտեմբեր 2019 թվական

ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի առաջին մասի պահանջներով ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2019 թ. երրորդ եռամսյակի բյուջեի հաղորդումը ըստ հավելված 1 և 2-ի:

Կողմ (3) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Յարալյան Վաղինակ

Մանուչարյան Ֆելիքս

Բայրամյան Միքայել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հակոբ Սարիբեկյան**

(Կ. Տ.)

Հավելված N1
Դիտավան համայնքի ավագանու
2019թվականի հոկտեմբերի 30-ի
թիվ 18-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01.2019թ.-30.09.2019թ.ժամանակահատվածի համար)

հազար դրամ

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Երրորդ եռամսյակի հաստատված պլան			Փաստացի		
			Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝		Ընդամենը (ս.11+ս.12)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	10	11	12
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)**		**8,127.3**	**8,025.5**	**101.8**	**7,682.5**	**7,580.7**	**101.8**
1100	**այդ թվում[a] 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160)**	**7100**	**2,854.5**	**2,854.5**	**X**	**2,523.9**	**2,523.9**	**X**
1110	**այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից**	**7131**	**1,350.0**	**1,350.0**	**X**	**1,276.3**	**1,276.3**	**X**
1111	այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		330.0	330.0	X	220.3	220.3	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		1,020.0	1,020.0	X	1,056.0	1,056.0	X
1120	**1.2 Գույքային հարկեր այլ գույքից**	**7136**	**1,470.0**	**1,470.0**	**X**	**1,206.1**	**1,206.1**	**X**
1121	այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար		1,470.0	1,470.0	X	1,206.1	1,206.1	X
1130	**1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**	**7145**	**34.5**	**34.5**	**X**	**41.5**	**41.5**	**X**
1131	այդ թվում՝ Տեղական տուրքեր (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137	7145	34.5	34.5	X	41.5	41.5	X
1132	Շին. Թույլտվության համար		30.0	30.0		40.0	40.0	

1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		4.5	4.5	X	1.5	1.5	X
1200	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260)**	**7300**	**4,511.0**	**4,511.0**	**0.0**	**4,511.0**	**4,511.0**	**0.0**
1250	**2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258)**	**7331**	**4,511.0**	**4,511.0**	**X**	**4,511.0**	**4,511.0**	**X**
1251	որից՝ ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		3,011.0	3,011.0	X	3,011.0	3,011.0	X
1257	բ)Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ(սուբյենցիաներ)		1,500.0	1,500.0	x	1,500.0	1,500.0	x
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390)**	**7400**	**761.8**	**660.0**	**101.8**	**647.6**	**545.8**	**101.8**
1330	**3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334)**	**7415**	**450.0**	**450.0**	**X**	**419.8**	**419.8**	**X**
1331	այդ թվում՝ Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		450.0	450.0	X	419.8	419.8	X
1350	**3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352)**	**7422**	**60.0**	**60.0**	**X**	**6.0**	**6.0**	**X**
1351	այդ թվում՝ Տեղական վճարներ		60.0	60.0	X	6.0	6.0	X
1380	**Գույքի օտարումից մուտքեր**		**101.8**		**101.8**	**101.8**		**101.8**
1390	**3.6 Այլ եկամուտներ (տող 391)**		**150.0**	**150.0**		**120.0**	**120.0**	
1391	այդ թվում օրենքով իրավական ակտերով ոչ հարկային եկամուտներ		150.0	150.0	X	120.0	120.0	X

Համայնքի ղեկավար՝ Հ.Սարիբեկյան

Հաշվապահ՝ Ս.Ղիասյան

հավելված N 2
Դիտավան համայնքի ավագանու
2019 թվականի հոկտեմբեր 30-ի
թիվ 18-Ա ո որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01.2019թ.-30.09.2019թ.ժամանակահատվածի համար)

հազար դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		երրորդ եռամսյակի հաստատված պլան			Փաստացի		
			Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝		Ընդամենը (ս.11+ս.12)	այդ թվում՝	
	անվանումները	NN		վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	10	11	12
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000)		9,433.3	8,240.4	1,192.9	8,101.5	7,415.5	686.0
	այդ թվում՝							
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող4100+տող4200+տող4300+ տող4400+տող4500+ տող4600+տող4700)	x	7,990.4	7,990.4	-	7,360.5	7,360.5	-
	այդ թվում՝							
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող4110+տող4120+տող4130)	x	5,510.0	5,510.0	X	5,275.0	5,275.0	X
	այդ թվում՝							
4110	*ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող4111+տող4112+ տող4114)*	x	5,510.0	5,510.0	X	5,275.0	5,275.0	X
4111	որից -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	4,150.0	4,150.0	X	4,025.0	4,025.0	X
4111	Գործազրկության- Աշխատողների աշխատավարձեր	4111	1,200.0	1,200.0	X	1,200.0	1,200.0	X
4112	-Պարգևատրումներ	4112	160.0	160.0		50.0	50.0	
4210	*ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող4211+տող4212+տող4213+ տող4214+տող4215+տող4216+ տող4217+տող4220+տող 4241)*	x	2,341.7	2,341.7	X	1,992.0	1,992.0	X
	որից՝							

4211	-Էներգետիկ ծառայություններ	4212	289.2	289.2	X	240.4	240.4	X
4212	-Կոմունալ ծառայություններ	4213	250.0	250.0		190.0	190.0	
4213	-Կապի ծառայություններ	4214	60.0	60.0	X	54.3	54.3	X
4215	ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ (տող4221+տող4222+տող4223)	x	5.2	5.2	X	-	-	X
4216	որից՝							
4217	-Ներքին գործուղումներ	4221	5.2	5.2	X	-	-	X
4220	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4231+տող4232+տող4233+տող4234+տող4235+տող4236+տող4237+տող4238)որից՝	x	1,012.0	1,012.0	X	834.7	834.7	X
4231	Տեղեկատվական ծառայություններ	4234	25.0	25.0		8.1	8.1	
4232	-Կառավարչական ծառայություններ	4235	-	-	X	-	-	X
4233	Ներկայացուցչական ծախսեր	4237	370.0	370.0		322.6	322.6	
4234	Գույքի վարձակալություն	4216	270.0	270.0		270.0	270.0	
4235	ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	120.0	120.0		40.0	40.0	
	Մասնագիտական ծառայություններ	4241	210.0	210.0		184.0	184.0	
4236	համակարգիչների և սարքավորումների անթացիկ նորոգում և պահպանում	4252	17.0	17.0	x	10.0	10.0	x
4241	ՆՅՈՒԹԵՐ (տող4261+տող4262+տող4263+տող4264+տող4265+տող4266+տող4267+տող4268)	x	725.3	725.3	X	672.6	672.6	X
4250	որից՝							
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	50.0	50.0	X	32.5	32.5	X
4262	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	-	-	X	-	-	X
4263	հատուկ նպատակային այլ նյութեր	4269	375.3	375.3	X	340.1	340.1	X
4263	Գործազրկության-հատուկ նպատակային այլ նյութեր	4269	300.0	300.0	X	300.0	300.0	X
4540	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող4541) այդ թվում՝		170.0	170.0		55.0	55.0	
4541	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) (տող4546+տող4547+տող4548)	x	170.0	170.0	X	55.0	55.0	X
4545	որից՝							

4546	-Հուղարկավորության նպաստներ բյուջեից	4726	90.0	90.0	X	-	-	X
4547	-Մայրության նպաստներ բյուջեից	4722	-	-	X	-	-	X
4548	-Այլ նպաստներ բյուջեից	4729	80.0	80.0	X	55.0	55.0	X
4600	*1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող4630+տող4633)*	x	138.7	138.7	-	93.5	93.5	-
4610	այդ թվում՝							
4630	*ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4631+տող4632)*	x	63.0	63.0	X	63.0	63.0	-
	որից՝							
4631	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	63.0	63.0	X	63.0	63.0	X
4632	Կապիտալ դրամաշնորհ գյուղտեխնիկայի ձեռք բերման համար	4657	-	-		-		-
4633	-Պարտադիր վճարներ	4823	162.7	162.7	X	30.5	30.5	X
4634	*ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող4771)*	x	80.0	80.0	-	-	-	-
	որից՝							
	-Պահուստային միջոցներ	4891	80.0	80.0	-	-	-	-
4741	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող5100+տող5200+տող5300+տող5400)	x	1,192.9	-	1,192.9	686.0	-	686.0
4742	այդ թվում՝							
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130)	x	1,192.9	X	1,192.9	686.0	X	686.0
	այդ թվում՝							
5110	*ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112)*	x	320.0	X	320.0	-	X	-
5111	*Շենքերի և շինությունների ձեռք բերում*	5111	320.0		320.0	-		-
5120	*նյութեր և պարագաներ*	5221	580.0		580.0	580.0		580.0
5120	այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	117.0		117.0	106.0	-	106.0
5130	նախագծանախահաշվային աշխատանքներ	5134	175.9		175.9	-	-	-

Համայնքի ղեկավար՝ Հ.Սարիբեկյան

Հաշվապահ՝ Ս.Ղիասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 19-Ն

30 հոկտեմբեր 2019 թվական

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջների և << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել տեղական վճար.

1) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համատեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000/հազար/ դրամ:

2) Տեղական ինքնակառավարման մարմինների կողնից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար յուրաքանչյուր մասնակցի համար սահմանել 1000/հազար/ դրամ:

2. Սահմանել տեղական տուրք.

1) Համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և / կամ / ծխախոտի վաճառքի համար, հանրային սննդի օբյեկտում ոգելից խմիչքներ և / կամ / ծխախոտի արտադրանքի

իրացման թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի / իրացման / կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրք սահմանել 1500 / մեկ հազար հինգ հարյուր / դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 5000 / հինգ/ հազար դրամ:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքի շինությունների / ներառյալ՝ ոչ հիմնական / շինությունների / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրք սահմանել :

3. Հիմնական շենքերի և շինությունների համար՝

1) Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեզործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ:

4. Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

1) Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000/ երեք / հազար դրամ:

2) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 / հինգ / հազար դրամ:

Կողմ (3)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Յարալյան Վաղինակ		
Մանուչարյան Ֆելիքս		
Բայրամյան Միքայել		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

(Կ. Տ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 20-Ա

30 հոկտեմբեր 2019 թվական

ԴԻՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՅՈՒՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ մասով և << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով մասով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Դիտավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը ըստ հավելված 1-ի:

2. ՈՒժը կորցրած ճանաչել Դիտավան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 27-ի <<Դիտավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը հաստատելու մասին>> N35-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից :

Կողմ (3)		Դեմ (0)	Ձեռնպահ (0
Յարալյան	Վաղինակ		
Մանուչարյան	Ֆելիքս		
Բայրամյան	Միքայել		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

(Կ. Տ.)

Հավելված 1

Դիտավան գյուղական համայնքի ավագանու

2019 թվականի հոկտեմբերի 30-ի N 20 - Ա որոշման

ԴԻՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 5

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	___% հավելավճար (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Համայնքի ղեկավար	1	144400		144400
Համայնքային ծառայողներ					
2	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	107130		107130
3	Առաջատար մասնագետ 3.1-1	1	89610		89610
4	Առաջատար մասնագետ 3.1-2	1	89610		89610
Տեխսպասարկման անձնակազմ					
5	Հավաքարար	0.5	102200		51100
ԸՆԴԱՄԵՆԸ		4.5	532950		481850

Աշխատակազմի քարտուղար _____ Ս. Ղազարյան

ստորագրություն անուն, ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 21-Ա

30 հոկտեմբեր 2019 թվական

«ԴԻՏԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ «ԴԻՏԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ , <<ԴԻՏԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ <<ԴԻՏԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՅՈՒՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ, 16-րդ և 28-րդ ենթակետերով ավագանին որոշում է

1. Դիտավան համայնքում հիմնադրել /ստեղծել/ «Դիտավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /ՀՈԱԿ/:

2. Հաստատել «Դիտավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. «Դիտավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակել Լուսինե Ռոբերտի Ավետիսյանին (անձնագիր AR0601233, տրված 23.02.2018թ. 38-ի կողմից, հանրային ծառայության համարանիշ 6808900078, բնակության վայրը ՀՀ Տավուշի մարզ գ.Դիտավան 1-ին փող. 42 տուն):

4. Հաստատել «Դիտավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /ՀՈԱԿ/-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը ըստ հավելվածի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Յարալյան Վաղինակ

Մանուչարյան Ֆելիքս

Բայրամյան Միքայել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հակոբ Սարիբեկյան**

(Կ. Տ.)

Կազմված է 30.10.2019 թ.

և բաղկացած է 10 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Տավուշի մարզի Դիտավան գյուղական
համայնքի ավագանու
« 30 » հոկտեմբեր 2019 թ.

թիվ 21-Ա որոշմամբ

Դիտավանի գյուղապետ՝

_____Հ. Սարիբեկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
Գրանցման ամսաթիվը «——» ————2019թ.
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ _____

Գրանցման թիվ _____

Վկայական _____

ՀՎՀՀ _____

Պետական ռեգիստրի տարածքային բաժնի պետ՝

_____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԴԻՏԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
համայնքային ոչ առևտրային կազմակերպության

Տավուշի մարզ, գյուղ Դիտավան 2019 թ.

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Տավուշի մարզի ԴԻՏԱՎԱՆ գյուղական համայնքի «ԴԻՏԱՎԱՆ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, ապահովում երեխաների խնամքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

Հաստատության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան գյուղական համայնքն է /այսուհետ՝ հիմնադիր/, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան համայնքի ղեկավարը:

1.2 Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.3 Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Տավուշի մարզ, գյուղ Դիտավան 1փողոց 35

1.4 Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.6 Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.7 Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.8 Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.9 Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

2.2 Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

Դիտավան համայնքի << Դիտավանի մանկապարտեզ >> ՀՈԱԿ-ի կանոնադրություն

2.3 Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվել և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձևավորումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

- Իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացվում է երկկողմանի և բազմակողմանի կապեր հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների, հիմնարկների, այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ
- Պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների
- Կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման և այլ բնագավառներում:

2.4 Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.5 Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ–հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

2.6 Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով.

ա) լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում.

բ) մարզաառողջարարական ծառայությունների կազմակերպում.

գ) զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական, շտկողական ծառայությունների կազմակերպում, իսկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով՝ միայն լիցենզավորման հիման վրա:

3.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

3.2 Հաստատություն ընդունվում են մինչև 6 տարեկան երեխաները՝ առողջության մասին բժշկական տեղեկանքի հիման վրա:

3.3 Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

3.4 Հաստատությունը մանկապարտեզ տեսակի է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում է երեխաների խնամքը.

3.5 Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

3.6 Հաստատության Երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

3.7 Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության, որի կազմակերպումը ապահովում է հաստատությունը:

1. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1 Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

4.2 Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության

գործունեությունը:

4.3 Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

4.4 Երեխայի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

4.5 Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

4.6 Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

4.7 Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

5.1 Հաստատությանը իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Հաստատության հիմնադիրը իրավունք ունի՝

- Հետ վերցնել իր կողմից Հաստատության ամրացված գույքը /այդ թվում գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները/
- Կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Հաստատության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները:
- Վերահսկողություն իրականացնել հաստատությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ
- Հայցով դիմել դատարան՝ Օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը անվավեր ճանաչելու նպատակով
- Օգտվել Օրենքով և Հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից

5.3 Հաստատության հիմնադիրը պարտավոր է՝

- Ապահովել Հաստատության բնականոն գործունեությունը
- Չհրապարակել Հաստատության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկությունները

- Կատարել Հաստատության նկատմամբ ստանձնած պարտավորությունները
- Պահպանել սույն կանոնադրության դրույթները:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

6.2 Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

6.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

6.4 Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

6.5 Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

6.6 Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

6.7 Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, Երևանի քաղաքապետի, ավագանու որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անրաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

6.8 Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

6.9 Հաստատությունը ֆինանսավորում է Դիտավանի համայնքապետարանը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

6.10 Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

6.11 Հաստատությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.1 Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

7.2 Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

7.3 Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը,
բ) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
գ) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.
դ) հաստատության կանոնադրության կամ դրա փոփոխությունների հաստատումը.